Համաձայն «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Վարչության 25.04.2022 թվականի որոշման
Գործում է 28.04.2022 թվականից

ԱԲԲ-ՀԻՓՈԹԵՔ «ՁԵՌՔԲԵՐՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՑ»
ՎԱՐԿԱՏԵՍԱԿԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Բանկի հետ համագործակցող Կառուցապատողի կողմից կառուցվող շենքերի բնակարանների ձեռք բերման նպատակով հիփոթեքային վարկ (սեփական ռեսուրսներով)

1.	Վարկի հիմնական պայմաններ	
1.1	Վարկի նպատակը	ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ կողմից տրամադրվող հիփոթեքային վարկ 4.2 կետում նշված կառուցապատողների կողմից կառուցվող շենքերի բնակարանների ձեռք բերման նպատակով (սեփական ռեսուրսներով)
1.2	Վարկի արժույթը	ՀՀ դրամ
1.3	Վարկի նվազագույն գումար	5,000,000
1.4	Վարկի առավելագույն գումար (մեկ փոխառուի գծով առավելագույն գումար)	38,000,000
1.5	Տարեկան անվանական տոկոսադրույք	12.75%
1.6	Տարեկան փաստացի տոկոսադրույք	14.38-20.63%
1.7	Կրեդիտի տոկոսադրույքի տեսակը	հաստատուն տոկոսադրույք, որը ենթակա չէ փոփոխության կրեդիտավորման պայմանագրի գործողության ողջ ընթացքում
1.8	Նվազագույն կանխավճար	• Ձեռք բերվող անշարժ գույքի 10%* • Լրացուցիչ անշարժ գույքի գրավադրման դեպքում կանխավճար չի պահանջվում (լրացուցիչ գույքի գրավադրման դեպքում երկու գույքերի շուկայական արժեքը պետք է կազմի նվազագույնը վարկի գումարի 150%) *Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի աշխատակիցների համար կանխավճարը ՄԼ Մայնինգ ՍՊԸ կողմից Մ. Մելիքյան 2/1 հասցեում կառուցվող շենքում սահմանվում է 0 %
1.9	Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն (հաշվարկվում է գրավի գնահատված շուկայական արժեքի նկատմամբ)	• Ձեռքբերվող անշարժ գույքի (իրավունքի) գրավադրման դեպքում՝ 90% • Ձեռքբերվող և լրացուցիչ անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ կտրամադրվի անշարժ գույքի ձեռքբերման 100% գումարը, եթե վարկի գումարը չի գերազանցում ձեռքբերվող և լրացուցիչ անշարժ գույքերի շուկայական արժեքների հանրագումարի 85% • Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի աշխատակիցների համար վարկ/գրավ հարաբերակցությունը ՄԼ Մայնինգ ՍՊԸ կողմից Մ. Մելիքյան 2/1 հասցեում կառուցվող շենքում սահմանվում է 100 %
1.10	Վարկի ժամկետ	18-240 ամիս
1.11	Վարկի և տոկոսագումարի մարումներ	Ըստ հաճախորդի ընտրությամբ՝ • անուիտետային վճարումներ, • վարկի մայր գումարի ամենամսյա հավասարաչափ մարում և հաշվեգրված տոկոսների ամենամսյա մարում

1.12	Վարկի տրամադրման եղանակը	• Միանվագ, • Անկանխիկ
1.13	Վարկի վաղաժամկետ մարում	Թույլատրվում է, տույժեր և տուգանքներ չեն կիրառվում
2.	**Բանկի միջնորդավճարներ**	
2.1	Դիմում հայտի ուսումնասիրության միանվագ միջնորդավճար	5 000 ՀՀ դրամ
2.2	Վարկի սպասարկման միանվագ միջնորդավճար (գանձվում է տրամադրման պահին)	Վարկի գումարից 2 %
2.3	Վարկի սպասարկման ամսական միջնորդավճար	0 %
2.4	Բանկային հաշիվների բացում/վարում Քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ տեղեկությունների տրամադրում	Համաձայն Բանկում գործող սակագների
3.	**Վարկառուին/համավարկառուին ներկայացվող պահանջներ և պայմաններ**	
3.1	Վարկառու	• 21 տարին լրացած ՀՀ և ԱՀ քաղաքացի ռեզիդենտ ֆիզիկական անձ, վարկի մարման ժամկետին տարիքը չպետք է գերազանցի 65 տարին
3.2	Համավարկառու	• Վարկառուի հետ համապարտ պատասխանատվություն կրող 21 տարին լրացած ռեզիդենտ ֆիզիկական անձ, վարկի մարման ժամկետին տարիքը չպետք է գերազանցի 65 տարին • Համավարկառուների քանակը չի կարող գերազանցել 3 անձը
3.3	Վարկառուի/Համավարկառուի եկամուտներ	• Առաջնային եկամուտներ (պարտադիր/փաստաթղթավորված) – հաշվի է առնվում 100%-ի չափով*, • Երկրորդային եկամուտներ (ոչ պարտադիր/փաստաթղթավորված) – փաստաթղթերով հիմանվորված եկամուտներ, որոնք հաշվի են առնվում առավելագույնը 60%-ի չափով**, • Հայտարարագրված եկամուտներ (ոչ պարտադիր/փաստաթղթավորված) - հաշվի է առնվում առավելագույնը 60%-ի չափով, որը չի կարող գերազանցել առաջնային եկամտի կրկնապատիկը** (ներկայացված եկամուտները բանկի համար պիտի լինի իրատեսական, հակառակ դեպքում բանկը իրավունք ունի դրանք չհաշվարկելու:)
3.4	Վարկարժանության գնահատման ընդհանուր սկզբունքը	Ընդհանուր պարտքային վճարումների և զուտ եկամուտների առավելագույն հարաբերակցությունը (OTI գործակից) չպետք է գերազանցի 55%
3.5	Վարկառուի/Համավարկառուի վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ	• Վարկի տրամադրման որոշումը կայացնելու պահին գործող վարկային պարտավորությունները չպետք է լինեն ժամկետանց կամ դասակարգված որպես չաշխատող, և • Վերջին 12 ամիսների բոլոր (մարված և գործող) վարկերի ժամկետանց օրերի գումարային քանակը չպետք է գերազանցի 30 օրացույցային օրը:
4.	**Գրավի առարկային ներկայացվող պահանջներ և պայմաններ**	
4.1	Գրավի առարկա	• Ձեռք բերվող անշարժ գույք (անշարժ գույքի ձեռք բերման իրավունք) Առանց կանխավճարի վարկերի դեպքում նաև լրացուցիչ անշարժ գույքի գրավ
4.2	Գրավի առարկայի գտնվելու վայրը	• “Ն և Ս Քոնսթրաքշն” ՍՊԸ՝ ՀՀ, ք.Երևան, Անաստաս Միկոյան 64 • “ՄԼ-Մայնինգ” ՍՊԸ՝ ՀՀ, ք.Երևան, Ադոնցի փ. 19/8 • “Օրդ Դեվելոփմենթ” ՍՊԸ՝ ՀՀ, ք.Երևան, Գրիբոյեդովի 48 • “Մեծ Սյունիք” ՓԲԸ՝ ՀՀ, ք.Երևան, Նոր Նորք, Հ.Գյուրջյան 27

		• “Օկտագոն” Ս/Կ՝ ՀՀ, ք.Երևան, Թումանյան 2 անց., 5/9 • “Այգեձոր” ՍՊԸ՝ ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Դ. Անհաղթի փ. 11/12 • “Սահակյանշին” ՓԲԸ ՀՀ, ք.Երևան, Շենգավիթ, Հ. Հովսեփյան 31 • «ԷՄ ԷՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ՀՀ, կոտայքի մարզ, Կոտայք, գ. Առինջ Պ. Սևակ թաղ 17փ. 17հող • “ՄԼ Մայնինգ” ՍՊԸ՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Մելիքյան փողոց, թիվ 2/1 • “Սահակյանշին” ՓԲԸ ՀՀ, ք.Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 13 • “ՄԼ Մայնինգ” ՍՊԸ՝ ՀՀ, ք. Երևան, Ադոնցի փողոց 19/19 • “ԱԿՎԱ-ԼԵՆ ՇԻՆ” ՍՊԸ՝ ՀՀ, ք. Երևան, Չարենցի փողոց 76/5 • “ՄՎ Էլիտ” ՍՊԸ՝ ՀՀ, Կոտայքի մարզ ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ 3/1 • “Բայազետ Քոնսթրաքշեն” ՍՊԸ՝ ՀՀ, ք. Երևան, Խանջյան 9/3 • “ՄԼ-Մայնինգ” ՍՊԸ՝ ՀՀ, ք.Երևան, Մոնթե Մելքոնյան 16 • ”Մամիկ 41/1” ՍՊԸ, ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 42/1 • “ՄԼ Մայնինգ” ՍՊԸ, ՀՀ, ք. Երևան, Ադոնցի փողոց 19/9 • “ՄԼ Մայնինգ” ՍՊԸ, ՀՀ. ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Բաբաջանյան փողոց 42/5 • “Դ ԸՆԴ ԷԴ ԻՆՎԵՍՏ ԳՐՈՒՊ” ՍՊԸ, ՀՀ, ք. Գյումրի, Գ. Նժդեհի փողոց N 9/10
4.3	Գրավի առարկայի գնահատում	Անշարժ գույքի ձեռքբերման (անշարժ գույքի իրավունքի) դեպքում անշարժ գույքի գնահատում չի պահանջվում՝ հիմք է ընդունվում կառուցապատողի կողմից ներկայացված վաճառքի արժեքի մասին տեղեկանքը: (գրավադրված գույքի սեփականության վկայական ստանալուց հետո տասնհինգ օրացուցային օրվա ընթացքում հաճախորդը պարտադիր պետք է ներկայացնի Բանկի հետ համագործակցող ընկերության կողմից տրամադրված գրավադրված գույքի գնահատման հաշվետվություն) Սույն կետը կիրառելի է նաև 01.02.2022թ.-ից հետո ընդունված դիմում-հայտերի համար:
5.	**Ապահովագրությանը ներկայացվող պահանջներ**	
5.1	Ապահովագրություն	• Դժբախտ պատահարներից ապահովագրություն- պարտադիր • Անշարժ գույքի գրավի ապահովագրություն – պարտադիր իրականացվում է գրավադրված գույքի սեփականության վկայականի և գնահատման հաշվետվութունը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում Անշարժ գույքի գրավի և Դժբախտ պատահարների ապահովագրական գումարները իրականացվում է տարեկան կտրվածքով՝ բացառապես Բանկի հետ համագործակցող ընկերությունների կողմից: Ապահովագրական գումարները հաշվարկվում են վարկի մնացորդային գումարի վրա:
6.	**Լրացուցիչ պայմաններ**	
6.1	Դիմում-հայտի մերժումը	• ***Հաճախորդը չի համապատասխանում Բանկի կողմից սահմանված.*** ***- Վարկարժանության չափանիշներին*** ***- Վճարունակության չափանիշներին*** ***- Վարկունակության չափանիշներին***
	Վարկառուի կողմից	• ***Ժամկետանց տոկոսների գծով Բանկը Վարկառուից գանձում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ժամկետանց գումարի 0,13%-ի չափով,*** • ***Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում՝ մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝*** ***1) Տույժ/տուգանքներ*** ***2) Տոկոսագումարներ*** ***3) Մայր գումար*** • ***Վարկը պայմանագրով նախատեսված ժամկետներում չմարվելու***

6.2	**վարկային պարտավորությունների չկատարման դեպքում**	***դեպքում պայմանագրով նախատեսված տոկոսների հաշվարկը դադարում է և այդ օրվանից ժամկետանց գումարի նկատմամբ մինչև ժամկետանց պարտքի փաստացի կատարման օրը հաշվարկվում են տոկոսներ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով,***
		ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՄԻՆՉԵՎ 7 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՎԱՐԿԱՌՈՒԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԻՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՋ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԚ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:**
		Բանկն իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու:
		Գրավադրված անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու դեպքում, իրացումից ստացված գումարի հաշվին գրավով ապահովված պահանջն ամբողջությամբ չբավարարվելու դեպքում տարբերությունը բռնագանձվում է վարկառուի այլ գույքից:
6.3	Հաճախորդի այլ ծախսեր	✓ Գրավի գնահատման հետ կապված ծախսեր (15,000-25,000 ՀՀ դրամ) համաձայն Բանկի հետ համագործակցող գնահատող ընկերությունների կողմից սահմանված սակագների ✓ Նոտարական ձևակերպման հետ կապված ծախսեր (15,000-25,000 ՀՀ դրամ) ✓ Կադաստրային ձևակերպման հետ կապված ծախսեր՝ իրավունքի պետական գրանցում (բնակարանի ձեռքբերման դեպքում՝ 72,000-73,000 ՀՀ դրամ, մնացած դեպքերում՝ 27,000-28,000 ՀՀ դրամ) ✓ Միասնական տեղեկանք՝ 10,000 ՀՀ դրամ ✓ Հրդեհից և այլ վտանգներից գույքի ապահովագրության հետ կապված ծախսեր՝ վարկի մնացորդային գումարի 0,15% (համաձայն Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների կողմից սահմանված սակագների): ✓ Դժբախտ պատահարներից ապահովագրության հետ կապված ծախսեր՝ վարկի մնացորդային գումարի 0,15 % (համաձայն Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների կողմից սահմանված սակագների)
6.4	Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետ	*Մինչև 7 աշխատանքային օր*
6.5	Վարկի ձևակերպման վայր	*Բանկի բոլոր մասնաճյուղեր* (բացառությամբ Արարատյան և Արշակունի մասնաճյուղերի)
7.	**Վարկառուի/համավարկառուի առաջնային և երկրորդային եկամուտների դասակարգում**	

* Որպես առաջնային եկամուտ ընդունվում է.

- աշխատանքի վայրից ներկայացված տեղեկանքով հաստատված եկամուտը՝ աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ (հիմք է ընդունվում ՀՀ ֆինանսների նախարարի, ՀՀ ԱՍՀ նախարարի և ՊԵԿ նախագահի համատեղ հրամանը՝ աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ցանկը սահմանելու մասին),
- փաստաթղթավորված շահաբաժիններ,
- հարկային հաշվետվություններով հիմնավորված բիզնես եկամուտներ,
- փաստաթղթերով հիմնավորված եկամուտներ՝ վարձակալությունից ստացված եկամուտները, որոնք ամրագրված են վարձակալության պայմանագրով՝ հաստատված նոտարի կողմից և գրանցված Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից, ընդ որում՝ վարձակալության պայմանագիրը պետք է կնքված լինի ոչ պակաս, քան վարկային հայտ ներկայացնելու պահից երեք ամիս առաջ (բացառությամբ վարձակալության պայմանագրի վերակնքման դեպքերի) և պետք է լինի կնքված առնվազն մեկ տարի ժամկետով,

- կենսաթոշակները և պարբերական բնույթ կրող պետական նպաստները՝ հաստատված լիազոր մարմնից ներկայացված տեղեկանքով:

** Որպես երկրորդային եկամուտ ընդունվում է.

- Բանկում ներդրված ավանդային պայմանագրի համաձայն ստացվելիք տոկոսագումարները, ընդ որում՝ ավանդային պայմանագիրը պետք է կնքված լինի ոչ պակաս, քան վարկային հայտ ներկայացնելու պահից երեք ամիս առաջ և պետք է լինի կնքված առնվազն մեկ տարի ժամկետով և նմանատիպ այլ եկամուտներ, որոնք վարկունակության հաշվարկում ներառվում են 60%-ի չափով,

- հայտարարագրված եկամուտներ՝ Հաճախորդի կողմից հայտարարագրված այլ եկամուտներ (օրինակ՝ վերջին 12 ամիսների ընթացքում պարբերաբար ստացված դրամական փոխանցումներ, արտաժամյա աշխատանքների դիմաց ստացված վճարներ, վճարովի ծառայությունների մատուցումից ստացված եկամուտներ և նմանատիպ այլ եկամուտներ), որոնք վարկունակության հաշվարկում հաշվի են առնվում առավելագույնը 60%-ի չափով և չպետք է գերազանցեն առավելագույնը առաջնային եկամտի քառապատիկը:

8. Հիփոթեքային վարկավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

Փաստաթղթերի ցանկ	**Հաճախորդից պահանջվող փաստաթղթեր**	**Համավարկառու-(ներ)ից պահանջվող փաստաթղթեր**
Անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ)	✓	✓
Սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ, բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից (նույնականացման քարտ ներկայացնելու դեպքում՝ չի պահանջվում)	✓	✓
Ամուսնու/կնոջ անձնագրի և սոցիալական քարտի կամ հանրային ծառայության համարանիշի /բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից/ պատճեններ	✓	✓
Առկայության դեպքում ամուսնության վկայականի պատճեն	✓	✓
Զբաղվածության և եկամուտների մասին տեղեկանք, որտեղ նկարագրված կլինի տվյալ ընկերությունում զբաղեցրած պաշտոնի, աշխատանքային ստաժի, ինչպես նաև վերջին 12 ամիսների ընթացքում փաստացի ստացված եկամուտների վերաբերյալ	✓	✓
Երկրորդային եկամուտի ապացույցներ /առկայության դեպքում/	✓	✓
Հայտարարագրված եկամուտների ապացույցներ /առկայության դեպքում/	✓	✓
Գրավադրվող անշարժ գույքի/երի սեփականության վկայականի/ների պատճեն	✓	-
Գրավադրվող անշարժ գույքի/երի ծագումն ու դրա նկատմամբ սեփականության, ինչպես նաև այլ իրավունքներ հաստատող վկայական, փաստաթղթեր	✓	
Անշարժ գույքի վաճառողի անձնագրի, սոց. քարտի և ամուսնության վկայականի պատճենները	✓	
Անկախ գնահատողի կողմից կատարված գույքի գնահատման հաշվետվություն	✓	-
Վարկի տրամադրման որոշում կայացնելուց հետո պահանջվող փաստաթղթերի ցանկ		
Տեղեկանք ՀՀ ԿԱ Կադաստրի պետական կոմիտեի կողմից անշարժ գույքի գրավադրված կամ այլ տիպի արգելանքի տակ չլինելու մասին	✓	
Անշարժ գույքի առուվաճառքի և գրավի /հիփոթեքի/ պայմանագիր	✓	
Սեփականության իրավունքի գրանցման վկայական	✓	
Գրավի իրավունքի գրանցման վկայական	✓	
Այլ փաստաթղթեր ըստ անհրաժեշտության	✓	

Ուշադրություն

Արտարժույթով տրամադրվող վարկերի դեպքում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա: Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Անվանական տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան է կազմում վարկի տարեկան տոկոսադրույքը, որը հաշվարկվում է վարկի մնացորդի նկատմամբ տարեկան կտրվածքով:

Բանկի վերաբերյալ տվյալներ.
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերություն
Հասցե՝ 0010, ՀՀ, ք.Երևան,Նալբանդյան 48, Հեռ.՝ (+37410) 59-20-20, (+37460) 37-25-00, ֆաքս՝ +37410 59 20 64
Ինտերնետային կայք՝ www.armbusinessbank.am , Էլ. Փոստ՝ info@armbusinessbank.am
Գրանցման վկայական՝ թիվ 0176, տրված 10.12.1991թ., Բանկային գործունեության լիցենզիա՝ թիվ 40, տրված 10.12.1991թ.
Ծառայությունների ցանկը, որը Բանկը իրավունք ունի մատուցել՝ համաձայն “Բանկերի և բանկային գործունեության մասին” ՀՀ օրենքի Գլուխ 4-ի:

Համաձայն «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Վարչության 25.04.2022 թվականի որոշման
Գործում է 28.04.2022 թվականից

Բանկի հետ համագործակցող Կառուցապատողի կողմից կառուցվող շենքերի բնակարանների ձեռք բերման նպատակով հիփոթեքային վարկեր “Ազգային հիփոթեքային ընկերություն” ՎՎԿ ՓԲԸ – ի “Հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման” կարգի շրջանակներում

1.	Վարկի պայմաններ	
1.1	Վարկառուի եկամուտներ	Առաջնային եկամուտներ (պարտադիր) - հաշվի է առնվում 100% Երկրորդային եկամուտներ (ոչ պարտադիր)- հաշվի է առնվում առավելագույնը 60%
1.2	Արժույթ	ՀՀ դրամ
1.3	Տարեկան անվանական[1] տոկոսադրույք	• **120-180 ամիս - անշարժ գույքի ձեռք բերում՝ 10.4%** • **181- 240 ամիս - անշարժ գույքի ձեռք բերում՝ 11%** • **120-180 ամիս - բնակելի անշարժ գույքի ձեռքբերման մարզային վարկ՝ 8.9%** • **181-240 ամիս - բնակելի անշարժ գույքի ձեռքբերման մարզային վարկ՝ 9.2%**
1.4	Տարեկան փաստացի տոկոսադրույք*	**9.76%-13.06%**
1.5	Կանխավճար	Ձեռքբերվող անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ նվազագույնը ձեռքբերվող անշարժ գույքի արժեքի 30%, Ձեռքբերվող և լրացուցիչ անշարժ գույքերի գրավադրման, ինչպես նաև չվճարված կանխավճարի ապահովագրության կնքման դեպքում՝ նվազագույնը ձեռք բերվող անշարժ գույքի արժեքի 10%
1.6	Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն	• Ձեռքբերվող անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ 70% • Ձեռքբերվող և լրացուցիչ անշարժ գույքերի գրավադրման դեպքում՝ առավելագույնը ձեռքբերվող և լրացուցիչ անշարժ գույքերի գնահատված արժեքների հանրագումարի 70%, բայց ոչ ավել, քան ձեռքբերվող անշարժ գույքի արժեքի 90%

1.7	Ժամկետ	անշարժ գույքի ձեռք բերում 120-ից 240 ամիս
1.8	Վարկի և տոկոսագումարների մարման եղանակ	Ամենամսյա հավասարաչափ կամ անուիտետային
1.9	Վարկի նվազագույն գումար	1 000 000 ՀՀ դրամ
1.10	Վարկի առավելագույն գումար	**գոյություն ունեցող անշարժ գույքի ձեռք բերում՝** ձեռքբերվող բնակելի անշարժ գույքի դեպքում՝ ձեռքբերվող բնակելի անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքի 70%, բայց ոչ ավել քան 35 000 000 ՀՀ դրամ - ձեռքբերվող և լրացուցիչ անշարժ գույքերի գրավադրման դեպքում՝ առավելագույնը ձեռքբերվող և լրացուցիչ բնակելի անշարժ գույքերի գնահատված շուկայական արժեքների հանրագումարի 70%: Վարկի գումարը չի կարող գերազանցել ձեռքբերվող բնակելի անշարժ գույքի գնահատված շուկայական և ձեռքբերման արժեքներից նվազագույնի 90%, **կառուցվող /անավարտ/ անշարժ գույքի ձեռք բերում՝** առավելագույնը 35 000 000 ՀՀ դրամ, բայց ոչ ավել, քան -կառուցվող (անավարտ) անշարժ գույքի և լրացուցիչ անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ առավելագույնը կառուցվող (անավարտ) բնակելի անշարժ գույքի և լրացուցիչ անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքների հանրագումարի 70%: Վարկի գումարը չի կարող գերազանցել կառուցվող (անավարտ) բնակելի անշարժ գույքի գնահատված շուկայական և ձեռքբերման արժեքներից նվազագույնի 90%, ինչպես նաև կառուցապատողի հետ կնքված գնման իրավունքի պայմանագրով սահմանված անշարժ գույքի գնի և կառուցապատողին վճարված կանխավճարի տարբերության չափից
1.11	Վարկավորման այլ պայմաններ	**Վարկի գումարը՝** **35.000.001 ՀՀ դրամ - 60.000.000 մլն ՀՀ դրամ** **Վարկի տոկոսագումար՝** **Տարեկան անվանական 12.5 %** **Տարեկան փաստացի 13.65 % – 13.77 %** **Սույն կետով սահմանված պայմանների դեպքում OTI գործակիցը սահմանվում է 50%**
1.12	Վարկի տրամադրման եղանակ	Միանվագ, փուլային, անկանխիկ
1.13	Վարկի վաղաժամկետ մարում	Թույլատրվում է, տույժեր և տուգանքներ չեն կիրառվում
2.	Բանկի միջնորդավճարներ	
2.1	Դիմում-հայտի ուսումնասիրության միանվագ միջնորդավճար	5 000 ՀՀ դրամ
2.2	Վարկի սպասարկման միանվագ միջնորդավճար	մինչև 12 000 000 ՀՀ դրամ վարկերի համար - 20 000 ՀՀ դրամ 12 000 001 մինչև 20 000 000 ՀՀ դրամ վարկերի համար - 30 000 ՀՀ դրամ 20 000 001 ՀՀ դրամ և ավել վարկերի համար - 40 000 ՀՀ դրամ
3.	Վարկառուին / Համավարկառուին ներկայացվող պահանջներ	
3.1	Վարկառու / Համավարկառու	• Որպես Վարկառու կարող է հանդիսանալ 18 տարին լրացած ՀՀ քաղաքացի ռեզիդենտ ֆիզիկական անձը • Որպես Համավարկառու կարող է հանդիսանալ Վարկառուի հետ միևնույն ընտանիքի անդամ հանդիսացող 18 տարին լրացած ՀՀ քաղաքացի ռեզիդենտ ֆիզիկական անձը: Միևնույն ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ, եղբոր ամուսինն ու երեխաները
3.2	Վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ	• Վարկի տրամադրման որոշումը կայացնելու պահին գործող վարկային պարտավորությունները չպետք է լինեն ժամկետանց և/կամ դասակարգված որպես չաշխատող,

		• Վարկի տրամադրման որոշումը կայացնելու պահին գործող երաշխավորության ռիսկի դասը պետք է լինի ստանդարտ դասակարգված • Վերջին 12 ամիսների բոլոր (մարված և գործող) վարկերի ժամկետանց օրերի գումարային քանակը չպետք է գերազանցի 30 օրացուցային օրը:
4.	Գրավի գնահատում և ապահովագրություն	
4.1	Գրավի առարկա	• Ձեռք բերվող անշարժ գույք (անշարժ գույքի ձեռք բերման իրավունք)
4.2	Գրավի առարկայի գտնվելու վայրը	• Ն և Ս Քոնսթրաքշն" ՍՊԸ՝ ՀՀ, ք.Երևան, Անաստաս Միկոյան 64 • "ՄԼ-Մայնինգ" ՍՊԸ՝ ՀՀ, ք.Երևան, Ադոնցի փ. 19/8 • "Օրդ Դեվելոփմենթ" ՍՊԸ՝ ՀՀ, ք.Երևան, Գրիբոյեդովի 48 • "Մեծ Սյունիք" ՓԲԸ՝ ՀՀ, ք.Երևան, Նոր Նորք, Հ.Գյուրջյան 27 • "Օկտագոն" Ս/Կ՝ ՀՀ, ք.Երևան, Թումանյան 2 անց., 5/9 • "Ռիմ Գարուն" ՍՊԸ՝ ՀՀ, ք.Երևան, Ծովակալ Իսակով 12/11 • "Այգեձոր" ՍՊԸ՝ ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Դ. Անհաղթի փ. 11/12 • "Սահակյանշին" ՓԲԸ ՀՀ, ք.Երևան, Շենգավիթ, Հ. Հովսեփյան 31 • «ԷՄ ԷՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ՀՀ, կոտայքի մարզ, Կոտայք, գ. Առինջ Պ. Սևակ թաղ 17փ. 17հող • "ՄԼ Մայնինգ" ՍՊԸ՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Մելիքյան փողոց, թիվ 2/1 • "Սահակյանշին" ՓԲԸ ՀՀ, ք.Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 13 • "ՄԼ Մայնինգ" ՍՊԸ՝ ՀՀ, ք. Երևան, Ադոնցի փողոց 19/19 • "ԱԿՎԱ-ԼԵՆ ՇԻՆ" ՍՊԸ՝ ՀՀ, ք. Երևան, Չարենցի փողոց 76/5 • "Գրիգ Դեվելոփմենթ" ՍՊԸ՝ ՀՀ, ք. Երևան, Լենինգրադյան 29/17 • "ՄՎ Էլիտ" ՍՊԸ՝ ՀՀ, Կոտայքի մարզ ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ 3/1 • "Բայազետ Քոնսթրաքշեն" ՍՊԸ՝ ՀՀ, ք. Երևան, Խանջյան 9/3 • "ՄԼ-Մայնինգ" ՍՊԸ՝ ՀՀ, ք.Երևան, Մոնթե Մելքոնյան 16 • "Մամիկ 41/1" ՍՊԸ, ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 42/1 • "ՄԼ Մայնինգ" ՍՊԸ, ՀՀ, ք. Երևան, Ադոնցի փողոց 19/9 • "ՄԼ Մայնինգ" ՍՊԸ, ՀՀ. ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Բաբաջանյան փողոց 42/5 • "Դ ԸՆԴ ԷԴ ԻՆՎԵՍՏ ԳՐՈՒՊ" ՍՊԸ, ՀՀ, ք. Գյումրի, Գ. Նժդեհի փողոց N 9/10
4.3	Գրավի արժեքի գնահատում	Անշարժ գույքի ձեռքբերման (անշարժ գույքի իրավունքի) դեպքում անշարժ գույքի գնահատում չի պահանջվում՝ հիմք է ընդունվում կառուցապատողի կողմից ներկայացված վաճառքի արժեքի մասին տեղեկանքը: (գրավադրված գույքի սեփականության վկայական ստանալուց հետո տասնհինգ օրացուցային օրվա ընթացքում հաճախորդը պարտադիր պետք է ներկայացնի Բանկի հետ համագործակցող ընկերության կողմից տրամադրված գրավադրված գույքի գնահատման հաշվետվություն) Սույն կետը կիրառելի է նաև 01.02.2022թ.-ից հետո ընդունված դիմում-հայտերի համար:
4.4	Ապահովագրություն	• Անշարժ գույքի գրավի ապահովագրություն - պարտադիր • Դժբախտ պատահարներից ապահովագրություն - պարտադիր Ապահովագրումը իրականացվում է տարեկան կտրվածքով, բացառապես Բանկի հետ համագործակցող Ընկերությունների կողմից: Անշարժ գույքի գրավի և դժբախտ պատահարներից ապահովագրական գումարները հաշվարկվում են վարկի մնացորդային գումարի նկատմամբ:

5.	Լրացուցիչ պայմաններ	
5.1	Դիմում-հայտի մերժումը	• Հաճախորդի կողմից չեն ներկայացվել վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթեր: • «ԱՔՌԱ» վարկային բյուրո հարցման արդյունքում պարզվել է, որ Հաճախորդը ունի բացասական վարկային պատմություն: • Վարկունակության գնահատման արդյունքում պարզվել է, որ հաճախորդը վարկունակ չէ: • Վարկավորման գործընթացի արդյունքում հայտնի է դարձել հաճախորդի վերաբերյալ այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում հաճախորդի կողմից ներկայացված տեղեկությունը:
5.2	*Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում*	• *Ժամկետանց տոկոսների գծով Բանկը Վարկառուից գանձում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ժամկետանց գումարի 0,13% չափով,* • *Վարկը Պայմանագրով նախատեսված ժամկետներում չմարելու դեպքում պայմանագրով նախատեսված տոկոսների հաշվարկը դադարում է և այդ օրվանից ժամկետանց գումարի նկատմամբ մինչև ժամկետանց պարտքի փաստացի մարումը հաշվարկվում են տոկոսներ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով*
		Պարտավորությունները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտքի վերաբերյալ տեղեկությունները կուղարկվեն վարկային ռեգիստր և վարկային բյուրո (ԱՔՌԱ): *ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼԸ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՀԱՄԱՐ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ ԱՅԼ ՎԱՐԿԵՐ ՍՏԱՆԱԼԻՍ*
		Բանկն իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածել կամ իրացնել այն
5.3	Այլ պայմաններ	• Կազմակերպության հետ համագործակցության պայմանագրի շրջանակներում հատուկ պայմանավորվածությունների առկայության դեպքում, կարող են սահմանվել վարկավորման այլ պայմաններ և սակագներ [1] Սույն կետը չի տարածվում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հետ գործող պայմանների վրա: Տվյալ պարագայում գործում են Բանկի և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի միջև կնքված հուշագրով հաստատված տոկոսադրույքները և ժամկետները:

<u>Լրացուցիչ տեղեկատվություն</u>

Տոկոսագումարների հաշվարկման կարգ	Տոկոսադրույքը կիրառվում է վարկի նվազող մնացորդի նկատմամբ
Հաճախորդի այլ ծախսեր	✓ *Գրավի գնահատման հետ կապված ծախսեր (15,000-25,000 ՀՀ դրամ) համաձայն Բանկի հետ համագործակցող գնահատող ընկերությունների կողմից սահմանված սակագների* ✓ *Նոտարական ձևակերպման հետ կապված ծախսեր (15,000-25,000 ՀՀ դրամ)* ✓ *կադաստրային ձևակերպման հետ կապված ծախսեր՝ իրավունքի պետական գրանցում (բնակարանի ձեռքբերման դեպքում՝ 72,000-73,000 ՀՀ դրամ, մնացած դեպքերում՝ 27,000-28,000 ՀՀ դրամ)* ✓ *Միասնական տեղեկանք՝ 10,000 ՀՀ դրամ* ✓ *Սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում գործում են այլ սակագներ* ✓ *Հրդեհից և այլ վտանգներից գույքի ապահովագրության հետ կապված ծախսեր՝ վարկի մնացորդային գումարի 0,15% (համաձայն Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների կողմից սահմանված սակագների)*

	✓ *Դժբախտ պատահարներից ապահովագրության հետ կապված ծախսեր՝ վարկի մնացորդային գումարի 0,15 % (համաձայն Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների կողմից սահմանված սակագների)* ✓ *կանխավճարի ապահովագրության առկայության դեպքում՝ կանխավճարի մնացորդային գումարի չափով (համաձայն Բանկի հետ համագործակցող Ընկերությունների կողմից սահմանված սակագների)*
Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետ	Մինչև 7 աշխատանքային օր
Վարկի ձևակերպման վայր	Բանկի Գլխամասային գրասենյակում և բոլոր մասնաճյուղերում

Վարկի ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթեր

Նախնական փաստաթղթեր	Հաճախորդից պահանջվող փաստաթղթեր	Երաշխավորից/ Համավարկառուից պահանջվող փաստաթղթեր
Անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ)	✓	✓
Սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ, բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից,	✓	✓
Վարկառուի ընտանեկան վիճակը հաստատող փաստաթղթերի /ամուսնության վկայական, ամուսնության պայմանագիր, ամուսնալուծության վկայական և այլն/ (առկայության դեպքում)	✓	✓
Վարկառուի հետ բնակվող/խնամակալության տակ գտնվող անձանց անձնագրերի/ծննդյան վկայականները	✓	-
Եկամուտների մասին տեղեկանք հիմնական գործատուի կողմից	✓	✓
Զբաղվածության մասին տվյալներ (ներկայում զբաղեցրած պաշտոնը, տվյալ կազմակերպությունում աշխատանքի ստաժը) և տվյալներ նախկին զբաղվածության մասին (գործատուն, զբաղեցրած պաշտոնը, յուրաքանչյուր կազմակերպությունում աշխատանքի ստաժը)	✓	✓
Երկրորդական եկամուտի ապացույցներ	✓	✓
Ամուսնու/կնոջ եկամուտների մասին տեղեկանք (եթե ամուսնացած է),	✓	✓
Աշխատանքային պայմանագրի պատճեն	✓	✓
Վերջին երեք տարիներին իրականացված բոլոր վարկային գործարքների մասին մանրամասն տվյալներ, ներառյալ վարկային և գրավի պայմանագրեր,	✓	✓
Առկա բոլոր հաշիվների (ցանկացած տեսակի) և դրանց շարժի մասին տվյալներ (ամսական միջին մնացորդը, միջին ամսեկան մուտքերը և ելքերը)	✓	-
Բանկերում ցպահանջ և ժամկետային ավանդային հաշիվների առկայության դեպքում, տեղեկանք վերջին 6 ամսվա շարժի և մնացորդի վերաբերյալ	✓	-
Գնվող անշարժ գույքի ծագումն ու դրա նկատմամբ սեփականության, ինչպես նաև այլ իրավունքներ հաստատող վկայական, փաստաթղթեր,	✓	-
Անշարժ գույքի վաճառողի անձնագրի, սոց. քարտի և ամուսնության վկայականները	✓	-
Անկախ գնահատողի կողմից կատարված գրավադրվող գույքի գնահատման ակտը,	✓	-
Վարկի տրամադրման որոշում կայացնելուց հետո պահանջվող փաստաթղթեր		
Տեղեկանք Կադաստրի պետական կոմիտեից առ այն,որ անշարժ գույքը գրավադրված կամ այլ տիպի արգելանքի տակ չէ (Միասնական տեղեկանք),	✓	-

Գրավի իրավունքի գրանցման վկայագիր	✓	-
Սեփականության իրավունքի գրանցման վկայական	✓	-
Այլ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության	✓	✓

Եթե ինքնազբաղված է, ապա

- Հարկ վճարողի հարկային համարի պատճենը
- անհատ ձեռներեցի կամ իրավաբանական անձի պետական գրանցման վկայագրի պատճենը
- իրավաբանական անձի դեպքում կանոնադրության պատճենը
- վերջին 1 տարվա ընթացքում (ամսական, եռամսյակային, տարեկան) հարկային մարմին ներկայացված ֆինանսական հաշվետվությունները՝ հաստատված համապատասխան հարկային մարմնի կողմից
- նվազագույնը վերջին 6 ամիսների եկամուտների և ծախսերի գրառումները

Ուշադրություն

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Անվանական տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան է կազմում վարկի տարեկան տոկոսագումարը, որը հաշվարկվում է վարկի մնացորդի նկատմամբ տարեկան կտրվածքով:

Տոկոսագումարի հաշվարկման օրինակ.

- վարկի սկզբնական գումար – 10 000 000 ՀՀ դրամ
- վարկի ժամկետ -120 ամիս
- տարեկան տոկոսադրույք – 10,5%
- վարկի և տոկոսագումարների մարման եղանակ - անուիտետային

Ամսական մարումների մեծությունը կկազմի 134,935.00 ՀՀ դրամ

* Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի բանաձև.

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR).

A – տրամադրվող վարկի սկզբնական գումարն է.

n –վարկի մարմանն ուղղված վճարի թիվը.

N -վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը.

Kn-վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը.

Dn-վարկի տրամադրման օրից մինչև վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով.

i -ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են վարկավորման պայմանագրից կամ այլ կերպ:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման համար կարող եք օգտվել Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման հաշվիչից http://www.armbusinessbank.am/am/page/Crediting հղումով:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ.

Անշարժ գույքի ձեռք բերման դեպքում.

- վարկի գումար - 25 000 000 ՀՀ դրամ
- վարկի ժամկետ - 240 ամիս
- վարկի տոկոսադրույք -10,5%
- վարկի դիմում հայտի ուսումնասիրության միանվագ միջնորդավճար - 5 000 ՀՀ դրամ
- վարկի սպասարկման միանվագ միջնորդավճար - 40 000 ՀՀ դրամ
- գրավի գնահատման հետ կապված ծախսեր - 25 000 ՀՀ դրամ
- հրդեհից և այլ վտանգներից գույքի ապահովագրության հետ կապված ծախսեր՝ վարկի մնացորդային գումարի - 0,15%
- դժբախտ պատահարներից ապահովագրության հետ կապված ծախսեր՝ վարկի մնացորդային գումարի - 0,15%
- վարկի և տոկոսագումարների մարման եղանակ – անուիտետային

Տարեկան փաստացի տոկոսադրույքը կազմում է 11,47 %

Պայմանավորված վարկի գումարով, ժամկետով, մարումների հաճախականությամբ և այլ օժանդակ ծառայությունների արժեքի փոփոխություններով՝ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է տարբեր լինել վերոնշյալ օրինակից:

Բանկի վերաբերյալ տվյալներ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ Փակ Բաժնետիրական Ընկերություն
Հասցե՝ 0010, ՀՀ, ք.Երևան,Նալբանդյան 48, Հեռ.՝ (+37410) 59-20-20 , (+37460) 37-25-00, ֆաքս՝ +37410 59 20 64
Ինտերնետային կայք՝ www.armbusinessbank.am , Էլ. Փոստ՝ info@armbusinessbank.am
Գրանցման վկայական՝ թիվ 0176, տրված 10.12.1991թ., Բանկային գործունեության լիցենզիա՝ թիվ 40, տրված 10.12.1991թ.
Ծառայությունների ցանկը, որը Բանկը իրավունք ունի մատուցել՝ համաձայն “Բանկերի և բանկային գործունեության մասին” ՀՀ օրենքի Գլուխ 4-ի:

‘Ֆինանսներ բոլորի համար’ www.fininfo.am կայքի ‘Ֆինանսական օգնական համակարգ’